

Եղիտները առհասարակ հալածուած ցեղ մըն էին Թուրքիոյ մէջ: Անոնք Կուրմանճ քիւրդերէն ալ շատ վնասներ կրեցին: Անոնց կեդրոնը հարաւային Քիւրդիստանն էր, մօտ սիւրիական սահմանին, ուր կը մնան մինչեւ այսօր: Բայց փոքրիկ թիւ մը անոնցմէ դաղթած էր ժամանակին եւ հաստատուած էր Տաճկահայաստանի հիւսիսը, Ալաշկերտի եւ Վանի շրջաններուն մէջ: Եղիտները 1820-1830-ին մեծ հարուածներ ստացան Թուրքերէն: Մէկ մասը անցաւ ռուսական սահմանը եւ իր գոյութիւնը պահպանեց (հիմա ներկայ Հայաստանի սահմաններու մէջ ամփոփուած են անոնք), իսկ միւս մասը ցրուած մնաց Վանի եւ Բայազէտի շրջաններուն մէջ:

Երբ մեր ուշադրութիւնը կը դարձնենք քիւրդ իշխանապետութիւններուն, կը տեսնենք որ անոնք սուլթան Սէլիմ Ա.ի օրերէն մինչեւ 1847 թուականը, մօտ 334 տարի, երկու կարեւոր շրջաններ ունեցած են: Առաջին շրջանը 1514-էն մինչեւ 1683 թուականը (Վիեննայի առջեւ, Թուրքերու պարտութիւնը), աւելի խաղաղ շրջան մը կը բոլորէին եւ աւելի շեշտուած էր պետութիւն դառնալու ճգնաժամը, մասնաւորաբար մտաւորական տարրի մէջ: Երկրորդ շրջանը կը սկսի 1683-էն եւ կը վերջանայ 1847-ին: Այս շրջանին Թուրքերու միջամտութիւնը կը շատնայ. ներքին պառակտումները աւելի աչքի կը զարնեն, եւ նոր ցեղապետութիւններ կուզան հաստատուիլ Հայաստանի գաւառներու մէջ, կը զօրացնեն եղած աւատապետները եւ կ'ապրին հպատակ հայերու աշխատանքի քրտինքով:

Այսպիսով, հայութիւնը, բացի Սասունէն, քիւրդերուն կը ներկայանար իրրեւ հպատակ տարր մը, որով ոչ միայն հայերու հետ համագործակցութեան փորձ մը չկատարեցին ընդդէմ Թուրքերուն, այլ թէ՛ իրարու մէջ եւ թէ՛ Ղրղըլբաշներու եւ եղիտներու հետ լեզու մը չգտան, միացեալ ճակատ մը ստեղծելու համար ընդդէմ օսմանեան տիրապետութեան, հակառակ այն խոր ատելութեան, որ անոնք դատ դատ կը սնուցանէին Թուրքերու հանդէպ: Մինչդեռ այդ կէս անկախ իշխանապետութիւնները կը մասնակցէին բազմաթիւ պատերազմներու, որ տեղի կ'ունենային Թուրքիոյ կողմէ ընդդէմ պարսիկներու եւ արաբներու:

Երբեմն ալ կը միանային պարսիկներու՝ ընդդէմ Թուրքերու. իսկ շատ յաճախ, իրարու դէմ պատերազմական վիճակի մէջ էին:

1514-էն մինչեւ 1683 թուականը, երբ Թուրքերու քիթը կը կտրէր Վիեննայի դռներուն առջեւ, քրդական իշխանապետութիւնները կը վայելէին կատարեալ անկախութիւն մը: Սակայն, անոնք ընդունակ չեղան այդ 170 տարիներու ընթացքին միանալու եւ միացեալ պետութիւն մը կազմելու: Քիւրդերը իրենց թափառական բնաւորութեան եւ ցեղապետական փառասիրութիւններու բերումով՝ ազգային պետութիւն ստեղծելու փառասիրութենէ զուրկ էին: Կար նաեւ դարու ոգին: Քիւրդերու ֆէոտալական դարը անցած էր. (որ մինչեւ մեր օրերն ալ կը շարունակուի), ընկերային եւ պետական կազմ մը, որու էութիւնը փոքրիկ եւ բաժան բաժան իշխանապետութեան մէջ կը կայանար:

* * *

Քիւրդերու անկախ պետութիւն դառնալու պահանջը եւ անհրաժեշտութիւնը բնորոշող եւ ցեղապետներու պառակտումներու պատճառով այդ անկախութենէն զուրկ մնալու իրողութիւնը այնքան պայծառօրէն հրապարակ դնող քիւրդ մեծ բանաստեղծ եւ «Մամ ու Զիւն»ի հեղինակ Ահմէտ Հանի*) մէկ ոտանաւորը ամբողջութեամբ հոս մէջ կը բերեմ, գաղափար մը կազմելու թէ 1645-ին քիւրդ մտաւորականութիւնը ինչպիսի ըմբռնում ունէր քրդութեան ազատագրութեան մասին:

*) Քրդական բանաւոր գրականութեան մէջ, ամենէն արժէքաւոր քերթուածը կարելի է համարել «Մամ ու Զիւն»ը:

Ընդհանրապէս քիւրդ բանաստեղծութիւններու եւ մեծ քերթուածներու հեղինակները անյայտ մնացած են, չնորհիւ այն հանգամանքին, որ հեղինակները իրենց գործը կը յանձնեն ժողովուրդին բերանացի, եւ մէկ-երկու սերունդ յետոյ, հեղինակներու անունը կը մոռցուի:

Երկար ժամանակ հետաքրքրուած եմ «Մամ ու Զիւն» երգ-տրամով, որ իր ամբողջութեան մէջ, լրիւ ու անմասն հեղինակութիւն մը թուած էր ինծի. բայց չէի գիտեր թէ՛ այս